

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐՈՍ

Տարեկան 12 Ժր.
Վեցամսեայ 6 Ժր.


ԱՐՏԱՍՈՆՄԱՆ

Երկու քիւր մէկ ծառով
Տարեկան 14 Ժր.
Վեցամսեայ 7 Ժր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ



ԼՐԱԳԻ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du Journal

«Iraounk»

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иравуник»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ տրոշիր

Ծանուցման տողը
20 սանթիմ

ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՄԱԿԱՆ
ԳՐՈՆԻՐԵՍ

Սուղթան Համիտի մօտալուտ մահուան հաւանականութիւնը սթափում մը առաջ բերաւ թուրքիոյ գեղահայ տարրերուն մէջ ընդհանրապէս և հայ յեղափոխականներուն մէջ մասնաւորապէս:

Հին Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը՝ որուն գլուխը կը գտնուի այսօր համակրելի Մուրատ, հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը կ'ընէ իր օւկան Հնչակ թերթով.

Հնչակեան կուսակցութեան կեդր. նախագիւծիւնը սկզբունքով ընդունում եւ համաձայն է, որ ըստ կաշառքի փութով գումարուն «ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՄԱԿԱՆ ԿՕՆԳՐԵՍ»-ը քաղաքական անհրաժեշտութիւններէն միահամուռ ջանքերով դիմագրաւելու համար:

Կեդրոնական վարչութիւնն գտնում է ընկեր ՄՈՒՐԱՏԻ առաջարկը բոլորովին նպատակայարմար եւ ժամանակակից:

Լիայոյս ենք որ միւս կուսակցութիւններն էլ իրենց բարեհաճ համաձայնութիւնը կը յայտնեն եւ «ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՄԱԿԱՆ ԿՕՆԳՐԵՍԸ» կայանալուց յետոյ, ի հարկին, նախաձեռնութիւն կատարեն թիւրքիոյ մէջ գործող քաղաքական բոլոր կուսակցութիւններէն մի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՕՆԳՐԵՍ գումարելու:

Հայ Յեղափոխ. Գօնկրէս կամ Համաժողով գումարելու առաջարկը որ այս անգամ Մուրատին չնորհիւ Հին Հնչակեան կեդրոնէն կուգայ, արդէն տարիներ առաջ վեր. Հնչակեաններէն, Միութեանականներէն և դեռ ուրիշ շատ մը կողմերէ եկած էր, բայց մերժման և լուրջեան դատապարտում էր նոյն Հին Հնչակեան կեդրոնէն և Դաշնակցականներու կողմէ. մարդ չէ կարող բռնուի պոռանք չը յիշել այն դատապարտելի որոշումը զոր Ս. քաղաքը գումարուող Դաշնակցականներու պատգամաւորական ընդհ. ժողովը տուած էր երկու Հնչակեան լեզբայրասպան հատուածներու հետ յարաբերութեան չը մտնելու ոչ միութեան և ոչ հա-

մերաշխութեան նպատակաւ Բայց այս անգամ մեծ ուրախութեամբ կը տեսնենք, թէ միութեան, համերաշխութեան ու բանակցութեան համար ամեն հրաւեր մերժող այդ երկու կուսակցութիւնները իրենք կուգան իրենց օւկաններով հրաւեր կարդալ թէ՛ հայ Յեղափոխականներուն մէջ և թէ թուրքիոյ բոլոր գեղահայ տարրերուն մէջ համագործակցութեան կապ մը ստեղծելու:

Այնչափ կարեւոր այս սթափման այդ ասիւնան յապաղումէն առաջ եկած ծովացեալ չարիքներուն պատասխանատուութիւնը ձգելով այդ երկու կուսակցութեանց նախկին վարիչներուն վրայ մենք կուգան հետաքրքրուել առաջարկին իրականացման եղանակովը, որ դեռ որոշ կերպարանք մը չէ ստացած կը կարծենք:

Հին Հնչակ. կեդրոնը իր վերոգրեալ պաշտօնական յայտարարութեամբ խնդիրը լաւ հողի մը վրայ դրած է. այսինքն նախ Հայ Յեղափոխական կազմակերպութիւններու մէջ համաձայնութիւն գոյացնել և յետոյ թիւրքիոյ մէջ գործող քաղաքական կուսակցութիւններուն հետ համաձայնութեան գալ աշխատիլ Ընդհանուր Կօնգրէսով մը:

Քանի որ ժամանակը շատ սղած է, որպէսզի կրկին ժամանակի կորուստ չունենանք, անմիջապէս պէտք է հայ Յեղափ. Կօնգրէսը գումարելու առաջարկը գործնական հողի վրայ դրուի, և այս գործնական քայլը առնելու նախաձեռնութիւնը մենք կառաջարկենք որ Մուրատ ստանցնէ, ինք սկսի բանակցութիւնը յեղափոխական վարիչներու և կուսակցութիւններու ներկայացուցիչ մարմիններու հետ և վերջապէս ինք հրաւիրէ ժողովը: Մուրատի անձը գէթ առայժմ ամեն քննադատութենէ և կասկածներէ վեր ըլլալով, կը կարծենք թէ չկամութիւններու առիթ չպիտի ընծայէ և ամեն հրաւերեալներ պատշաճօրէն և գործնականապէս պիտի պատասխանեն անոր կոչին:

Օն ուրեմն թող գործի սկսուի և անյապաղ, որովհետեւ Օսմանեան կայսրութիւնը մեծ ոճրագործին մօտալուտ ստափումովը կրնայ մեծ յեղաշրջումի մը ենթարկուիլ, իսկ մենք պէտք չէ անպատրաստ գտնուինք, ինչպէս անցեալին մէջ:

ՀԱՅ ԱԶԱՏԱՐԱՐԸ

Պուլկարաց Ս. Նիկոլայ եկեղեցւոյ Հոգաբարձութեան հրաւիրանք երէկ գումարում մը տեղի ունեցաւ Սաէտինէնի Սրահին մէջ, ժողովին նպատակն էր խորհրդակցիլ թէ ինչ միջոցի պէտք է գիտնել Պալլադէսիւրէն թուրքերու ձեռքէն ազատուած պուլկար օրիորդին և ազատարար հայ երիտասարդին ապագան ապահովելու համար: Խուռն բազմութեան մէջէն մէկ քանի ատենաբաններ մեծ գովեստով խօսեցան անձնուէր հայ երիտասարդի մասին և առաջարկեցին հանգանակիչ յանձնախումբ մը կազմելով կարեւոր գումար մը յատկացնել օրիորդին և երիտասարդին: Գտնուեցաւ հանրածանօթ կեղծաւոր փաստաբանը Մ. որ իր սքզեալ հայատեցութեան ապացոյցը տալու համար ելաւ Վառնայի սովորական աղքատներուն կարգը դասել օրուան հերոսը և անոնց հաւասար նըպաստել, Բայց անմիջապէս բեմ բարձրացան երկու Մակեդոնացիներ, որոնք պէտք եղածին պէս նշառակեցին կեղծաւոր փաստաբանին սահմանափակող տողութիւնը և հրաւեր կարդացին ներկաներուն թէ իրենց նուիրական պարտականութիւնն է ամեն բանէ առաջ օր. Վէլիչգային և հայ երիտասարդին առատօրէն նպաստել, ներկաները բռնու ծափահարութեամբ և միահայնութեամբ ընդունեցին այս առաջարկը և կազմեցին հանգանակիչ Յանձնաժողով մը՝ նախագահութեամբ նահանգապետին և անդամակցութեամբ ոստիկանա-

պետին, քաղաքապետին, բարեգործ. ընկերութեանց ատենապետներուն և մէկ քանի պուլկար վաճառականաց:

Յանձնախմբի ընտրութենէն յետոյ խիստ զաւեշտական էր կեղծաւոր փաստաբանին հակասական վարմունքը, երբ ելաւ փափաք յայտնել որ ամենէն առաջ և էն աւելի հայ երիտասարդին նպատ տրուի. (խեղճ կեղծաւորը)

Ներկաներու բաղձանքին վրայ, նախագահ Տ. Տրակուլէվ հայ երիտասարդին լուր շրկելով սըրահ կանչեց, Բազմութիւնը ցրուելու վրայ էր երբ երիտասարդը ներս մտաւ. յանկարծ «կեցցէ» ներս գողում գողում մը սկսաւ սրահը թնդացնել, և երիտասարդը բազմութիւն ձեռքէ խլուելով ինքզինք օդին մէջ բարձրացած գտաւ. ձայները կը շարունակէին «կեցցէ» հայ հերոսը «կեցցէ» Հայաստանը և այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Գլխավոր Հօհէնլօ գերմանացի իշխանին վերջերս հրատարակած յիշատակագիրը եւրոպական միջազգային մամուլին մէջ մեծ ազդեցութիւն ձեռնարկեց: Այդ յիշատակագրին մեր ընթերցողները հետաքրքրող քանի մը կետերը հաղորդել հարկ կը դառնայ:

«Սթուազպուրկ, 31 մարտ 1890 ... Յետոյ կայսրը (Գերմանիոյ) իմացուց զօրաբաժնի պետերուն Ռուսիոյ մտադրութիւնը, որ կուգէր զինուորական գրաւման ենթարկել Պուլկարի և ասոր համար կը ցանկար Գերմանիայէ չէզոքութեան խոստում ստանալ, կայսրը ըսաւ թէ ինք Աւստրիոյ կայսեր խոստացած է հաւատարիմ դաշնակից մը ըլլալ և պիտի պահէր իր խոստումը:

Ռուսիոյ Պուլկարի գրաւելը Աւստրիոյ դէմ պատերազմ ըսել էր, և ինք չէր կրնար Աւստրիան

ՅԱԻԻ ՄՈՐՄՈՔՆԵՐ



Սարեր, ձորեր, ամայացան շիրմաց տակ,
Սիրտըս կըրակ՝ հերոսներէն հրգեհուած՝
Կարծես հիւլէ, հիւլէ անգոր բայց յըստակ
Կը մարմոքի ցաւերու տակ ա՛հ Աստուած...

Միտքըս հիւսկ կը սըլանայ դէպ նպատակ
Ո՛հ իմ ընկերք, վերքերս ցաւին վիրաւոր
Ուր ֆէտայի քաջ ընկերներ անյատակ,
Ոգեւորուն՝ ազատութեամբ ինկան հոն.

Փէտայինէ՛ր կարօտ աչքիս քուն տուէր,
Ուրկէ արցունք կաթիլ-կաթիլ ընկան վար
Ո՛հ Աստուած իմ՝ ալ էրուած է սիրտս հեգ
Ինչու թեման տակ շղթայ վզիս վշտահար...

Ներկային ցաւն ու կըսկիծ զիս կըրծեցին
Սեւ՝ օրերու ատելութեամբ սըզաւոր
Հիւսկ պահէ է որ լուծենք լուռ անցեալին
Վրէժները՝ պատիւ ունինք դարաւոր...

Եկէ՛ք տղե՛րք, ֆէդայիներ կըսպասեն
Քարատաւ վարդակարմիր դաշտին մէջ
Ուր կը հանգչի պատմութիւնն ու շուսին
Հերոսներու վեհ արքային մէջ ո՛հ անշէջ...

Եկէ՛ք տղե՛րք, զէնքով շինենք մահաբաճ
Սասուն, Ձէյթուն, Նէմրութ, Սիփան արեան ծով
Սուգ ստուերներ տարածեցին՝ ցիրուցան
Եկէ՛ք տղե՛րք, ազատութեան գիրկէ՛ն վերդով

Սասուն, Ձէյթուն Նէմրութ Սիփան բոցահեր
Կը թաղանթին բիրտ Սուլթանի ձեռքին տակ
Եկէ՛ք տղե՛րք հայ տարազով՝ հայ ըստուեր
Խաչակիքն ազատութեամբ՝ միանուագ

Օ՛ն յառաջ, քաջ ընկերներ օ՛ն անվըհատ
Սասուն կուլայ, բնութեան տակ պաշարուած
Օ՛ն անդէր, օ՛ն, զարնենք փշրենք անընդհատ
Արիւնհարու Սուլթանի զօրք՝ Ո՛հ ԱՍՏՈՒԱՅ...

ԱՏՈՒՄ

Լքանէր Հիւսկիտէ երեւան կու
գար կարծիքներու այն անհա-
մաճայնութիւնը կայսեր և Պիզ-
մարքին միջև, — ուստական ծրա-
գիրներու մասին — որ գէպի
խոլում յառաջացաւ:

«Պիլմարք Աստուրիան Լքել կու-
ղէր կայսրը ուղեց Աստուրիոյ
հետ ընթանալ, Կայսրի Ռուսիոյ
և Ֆրանսայի հետ պատերազմի
բռնուելու վտանգը յանձն առ-
նելով: Այս մասին կը յիշեմ Պիզ-
մարքին խօսքը, որ կըսէր թէ
կայսրը Ֆրանսիոյ Կիլիկիոյ Դի-
պլոմատականութիւնը կը բռնէ:
Այս ապագային համար սեւ բիծ
մըն է:»

1883 հոկտ. 27 — Իշխան Պիզ-
մարք ինձ պատմեց թէ Մուխ-
թար փաշան իր քով եկած էր
Խնդրելու համար որ իր ազգե-
ցութիւնը բանեցնէր թիւրքիոյ
մէջ Անգլիոյ ստանդարտիստներուն
դէմ: Պիզմարք մերժեց միջամ-
տել և փաշային խորհուրդ տուաւ
որ Եղեգատսի համար Ֆրանսայի
գիրքին, իսկ Պուլկարիոյ նկատ-
րամբ թիւրքիան ինքը իր գըլ-

խուն ճարը պէտք է տեսնէ, իսկ
այն մասին թէ Անգլիացիները
զիրենք կը ձանձրացնեն կոր
Հայաստանի նկատմամբ, ինքը
միայն սա կըսէր որ զանոնք գը-
լուխէն չէին ընեն: Պիզմարք
այնչափ կոշտ խօսք մը ըսաւ որ
Մուխթար փաշան զարմացաւ:
Պիզմարք ըսաւ թէ Կլաւսթոն
մեծ բեմքասաց մըն է, բայց
սահմանափակ քաղաքագէտ:

1877 սեպտ. 5 — Պիզմարքի
ծրագիրն էր Անգլիան և Ռուս-
սիան համաձայնեցնել Արևելքի
մէջ թիւրքիոյ դէմ: Նախարա-
րապետը կուղէր Ֆրանսացի-
ները գուրս թողուլ բոլոր բարձր
քաղաքական համաձայնութիւն-
ներէ:

Գապրիլին ինձ ըսաւ թէ Պիզ-
մարքը Ռուսիոյ հետ դաշնադրու-
թիւն մը ըրեր է, որով մենք կը
պարտաւորուէինք Ռուսը աղատ
թողուլ Պուլկարիոյ և Պուսոյ մէջ:
Իսկ ասոր փոխարէն Ռուսիան
յանձնառու կըլլար չէզոք մնալ

եթէ Գերմանիան Ֆրանսայի հետ
պատերազմի բռնուէր:

Այս դաշնադրութիւնը շնչուե-
ցաւ Գապրիլի նախարարու-
թեան միջոցին: Նա վերանորո-
գել չուղեց, որովհետեւ եթէ ի-
մացուէր Երրեակ Չինականու-
թիւնը կը քայքայուէր:

1896 սեպտ. 7ին Չարը Հոհեն-
լոի հետ խօսակցելով, ըսէր է թէ
գոհ է որ Արևելքը խաղաղանալու
վրայ է: Պուսոյ մէջ անկարգու-
թիւնները դադարեալ են և Յու-
նաստանը հանդարտ է: Նորին
Վեհափառութիւնը կը կարծէր որ
թէ Հայաստանի և թէ Կրէտէի
մէջ շարժումներուն ամբողջ պա-
տասխանատուութիւնը Անգլիոյ
վրայ կը ծանրանայ: և կը յարէր
«Ես Անգլիացիները և Անգլիան
չառ կը սիրեմ, կը համակրեմ,
բայց անոնց քաղաքականութե-
նէն կը կասկածիմ:»

ՀՈՅՆՐ ԵՒ ՊԱՐՄԻԿՆԵՐԸ (*)

(Թաւրիզի դէպքերը)

Թաւրիզ, սեպտեմբեր 10-ին
Սիրիի եղբայրիմ Համբարձում:
Գիտեմ, որ Պարսկաստանի դէպքերը
չառ հետաքրքրում են քեզ: Գիտեմ նոյն-
պէս հայ-պարսկական մերձեցման խն-
դով շատ ես զբաղվում: այդ պատճա-
ռով էլ գրում եմ քեզ այստեղի դէպ-
քերի մասին: Այդ պատճառով ուղար-
կելով քեզ այստեղի դէպքերի և
պարսկական սահմանադրական շարժ-
ման պարագլուխների գործունէութեան
նկարագիրը և հայերիս արված առա-
ջարկը, ինչդրում եմ այդ մասին յայտ-
նել ձեր կարծիքը, եւ թող հայ մա-
մուլը զբաղվի հայ-պարսկական մեր-
ձեցման կարեւոր խնդրով:

Սեպտեմբերի 5ին, երկուշաբթի
ուրեք և կէսին, մի սէիդ և մի մուլա
գալով ինձ մօտ — տունս, ասացին, թէ
ի դիմաց հայրենասէր մուսուլմանների
պատգամաւոր ենք եկել ձեր միջոցով
հայերին հաղորդելու հետեւեալը:
«Արդէն հայերիդ եւս յայտնի է, որ
Պարսկաստանը առաջադիմելու փոխա-
րէն հետզհետէ յետադիմում է շնորհիւ
տիրապետող ըսթիմի և կառավարի
պաշտօնեաների: Ժողովուրդը համոզ-
վում է, որ եթէ այսպէս շարունակվի
կրկին, Պարսկաստանը պէտք է ոչնչա-
նայ: այսինքն հարեւան պետութիւն-
ները օգտվելով երկրի անկեալ վիճա-
կից, նախօրոք պայմանաւորվելով,
Պարսկաստանը բաժանելու են իրար
մէջ: Մենք, մուսուլմաններս, պատ-
մութիւնից իմացել ենք, որ եթէ հայ-
երը, ասորիները եւ մի քանի այլ ազ-
գեր զբղւել են իրանց քաղաքական
անկախութիւնից, ընկել են օտարների
լծի տակ, դա իրանց անմիաբանու-
թեան հետեւանքն է եղել: Որպէսզի
մենք եւս այդ վիճակին չընկնենք,
վերջին մի տարվայ ընթացքում մեր
քաղաքացիներս պարսկական զորքեր
ուսած էր հայրենիքի գոյութիւնը պահ-
պահելու քարոզով: Երբ ժողովուրդին
պատրաստեցինք, միւս կողմից ի նկա-

(*) Այս վերին աստիճանի հետաքրքիր
նամակը ուղղված է Մշակի ախտատա-
կից պ. Հ. Առաքելեանին

տի ստեղծել մեր վեհափառ Շահի բարի
և զիջող բնավորութիւնը, որովհետ
կայացաւ ցոյց անել միայն թէ հրանում,
համոզուած լինելով, որ Շահը ժողո-
վրդասէր եւ աստուածավախ լինելով,
թող չի տայ, որ արիւն թափվի և
անմիջապէս պէտք եղած ֆերմանը կը
չնորհէ: Նաեւ ի նկատի ունենալով մեծ
վեղեր էյնը — Դովլաթի արեւնաբոլ
լինե-
լը, որովհետ նախ՝ նրա պաշտօնանկու-
թիւնը պահանջել, քանի որ բոլոր
աւագանին հակառակ էր նրան:

«Ինչպէս ծրագրված էր, թէ հրանում
ցոյցը սկսեցին: էյնը — Դովլէն պաշտօ-
նանկ լինելուց յետոյ, սահմանադրու-
թեան հարցը դրին: Մեծ մարզարէի
զօրութեամբ, պարսիկ յետադէմ եւ
անզարգացած ժողովրդի մէջ ընդհանուր
միութիւն հաստատվեց: հայրենիքը եւ
մեծն իրանի գահը անխախտ եւ անսա-
սան պահպանելու համար, մեր ընկեր-
ների քարոզները հետեւանքով, հոգե-
ւորականութիւնը եւ ժողովուրդը մի-
պացան ու թէ հրանում սահմանադրու-
թիւն պահանջեցին, եւ մեծ մարզարէի
սերունդից մի քանիսի նահատակու-
թեամբ կարողացանք ձեռք բերել:

«Մեծ Շահի բարի և ազնիւ զգաց-
մունքները եւ բարձր ձգտումներն աշ-
խարհին յայտնի են: Թող Աստուած
նորին Վեհափառութեան երկար կեանք
պարգեւէ: Բայց նրա չընկալաւ ի նը-
կատի ունենալով, որ սահմանադրու-
թեան օրով չեն կարող այլ եւս իրանց
աղքատ ազգականներին եւ բարեկամնե-
րին համար մեծ-մեծ ոռճիկներ հանել
ու թիվրի անուան տակ մուղու-
ֆաթ զեւղերի տէր դառնալ, նաեւ ըստ
իրանց նախկին սովորութեան, ուղած
մարդկանց որեւէ յանցանքի մէջ մե-
ղադրելով կեղծքով ու ոսկիներ դի-
զել, հայրենիքը եւ ազգի այլ անհա-
ւատարմ գաւաղները միացած, ամեն
աշխատութիւն գործ դրին, որ շնորհ-
ված սահմանադրութիւն չը գործադրվի,
եւ աշխատեցին վն: Շահին համոզել,
որ սահմանադրութեան կողմնակիցնե-
րը միայն թէ հրանի հասարակութեան
մի մասն է, թէ հրանից դուրս Պարս-
կաստանի միւս նահանգներում սահմա-
նադրութեան նկատմամբ զիտակցու-
թիւն անգամ չունեն և իրանց ան-
պատրաստ նկատելով չեն ձայնակցում:
Արգաղաւաճանների մեքենայութիւն-
ները մեղ տեղեկագրելով, թէ հրանից
պահանջել էին, որ մենք եւս նոյն պա-
պահանջը սկսենք այստեղ: Նորին
բարձր թիւն վալիաթին, Ատրպատա-
կանցիներս, ի սիրտէ սիրելներուս ա-
ռիթով, ծածուկ ժողովներ արեցինք,
թէ ինչ եղանակով սկսենք, որ մեր ա-
նեւելք ցոյցը նորին բարձրութիւնը
իր անձնաւորութեան չը վերադէ: մեր
ժողովները նպատակը հայրենիքի թշ-
նամբ պետական պաշտօնեաներին իմա-
ցին, որոնց թուում եւ մեր հոգեւորա-
կաններից մէկը, եւ գուշակեցին, որ
չուտով իրանց լայն իրաւունքներից
պէտք է զրկվեն: ուստի նրանք զաղո-
ւի ժողովներ օւնեցան եւ վերջն այն
եզրակացութեան եկան, որ ոչինչ բանով
չեն կարող մեր սկսած հայրենիքի սուրբ
գործը խափանել, եթէ ոչ հայ-թուրքա-
կան ընհարումն ու կոտորած յառաջ
բերելով: այդ օրերում այստեղ լուր
տարածվեց, իբր թէ Օրդուբաթի շրջա-
կայքում հայերը թիւրք գիւղերի վրա
յարձակելով, ազգաբնակչութիւնը կո-
տորել և զիւղերն աւերել են: չարա-
միսներն այդ լուրից օգտուելով ի-
րանց արբանակների միջոցով սկսե-
ցին Երեւանի նահանգից ամիսներ ա-
ռաջ այստեղ գաղթող մուսուլմաննե-
րից՝ մօտ հարիւր հոգի պատրաստելով,
իբր Օրդուբաթից նոր են եկել, ուղար-

զինք, դահաժառանգ կայսերա-
պետ Մարգար-Ալի-Միրզան, նա-
հանգապետը և ուրիշ բարձրաս-
տիճան անձանաւորութիւններ
Հայոց Առաջնորդին ետակներ
զրկած են, իսկ ուս հիւպատոսը
2 խաղախներ ու կառք մը զրծած
է. քաղաքին մօտ բազմութիւնը
ահագին չափերու հասած է:

— Տ. Կորիւն վարդ. Եսայեան
եկեղեցւոյ մէջ Սողոմոնի «Երգ
Երգոց»ը կարդալ մերժելուն
պատճառաւ Կրօն. ժողովին բա-
ցատրութիւն տալու կանչուած
էր. վարդապետը այդ ատենին
առջև համարձակօրէն ըսած էր
թէ «Երգ Երգոց»ը անբարոյա-
կանացուցիչ պարունակութիւն
ունենալուն համար կանանց ներ-
կայութեան կարգաւ անպատշաճ
կը գտնէ: Կորիւն վարդապետի
այս յայտարարութիւնը ապա-
ցուցուած յանցանք նկատելով
Կրօն. ժողովը զանի փիլոնաղո-
կութեան դատապարտեց, Բայց
այս շարժում եկած Կ. Պոլսոյ
թերթերէն կը տեղեկանանք թէ
վարդապետը գրաւոր յետս կո-
չոււ՛մ ըրած է իր յայտարարու-
թիւնը: Այժմ կը կը սպասուի որ
Կրօն ժողովը ներում չնորհէ:

— Պոլսոյ հիւանդանոցին հա-
մար երեք անգլիացի մասնագէտ
հիւանդապահ օրիորդներ բեր-
ուած են:

— Շումլան ստացած ենք
տեղւոյն Ազգ. վարժարանի ու-
սուցիչներուն գէժ քննադատական
նամակ մը, զոր տեղւոյ անցկո-
թեան պատճառաւ յաջորդ թիւի
կը յետաձգենք:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹՈՒՐԿԻԱ

Մաքէթոնեատաքի ինկիլիզ
գոնսօլոսարըն ըստթրթարը
իւզրէ, պու սէնէ Յունվար 1 տէն
Սեպտեմ. 30ա գատար Սէլանիք
վիլայէթինտէ 577 քիշի, Մանաս-
տը վիլայէթինտէ 481 վէ Գոսո-
վա վիլայէթինտէ 188 քիշի թէ-
լէֆ օլունմուշ օլտըզ ինկիլթէրա
խարիճիյէ նազըրը Բարլումանտա
սէօյլէմիշ տիր:

— Աթոս տաղընտա Բուվար
նովրա նամ րում մանաստըրընա
եազըն 8 իշճի գաթլ իթմիշլէր,
պունլարըն պէշի պուկար վէ
իւշիւ ուլահ րմըշլար:

— Կէօմրիւկէրին 100տէ 3
զամմը մէսէլէսի էլան սիւրիւն-
մէքթէ տիր կէշէն կիւն Սուլ-
թան վիւքէլաի ֆէֆքէլատէ մէճ-
լիսէ տալէթ իթտի պու մէսէլէ
իշիւն, ֆազաթ իշի Տիւյանը
Ումուճիյէ նազըրը Մ. Պէւճէնին
կէլմէսինէ թէթիւր իթմէկէ
մէճպուր օլտուլար:

S U Ն Ի Լ Ի Է

Վիւքէլա րէյիսի Մ. Ռաչօ
Բէթրով գապինէնին իսթիֆաւը
նը ֆէխ. Բրէնսէ թագտիմ իթ-
տի:

Բրէնս հազըրէթլէրի իսթիֆա-
յը գապուլ իտուպ տալիլիյէ
նազըրը Մ. Տ. Բէթքովը վիւքէ-
լա րէյիսի նասպ իտէրէք, գա-
պինէնին եէնիտէն թէշքիլինի
անա իհալէ էյլէտի:

Մ. Բէթքովըն թէքիլիի իւշրէ,
Բրէնս Բէթրապուրկ պուկար էլ-
չիսինի խարիճիյէ նազըրը թա-
յին էյլէտի, տիկէր նազըրլար
քէնտի մեմուրիյէթլէրինտէ իպ-
գա օլընտըլար:

— Միթինկլէրի պիր հիւտիւտ
թախթընա գօյմագ վէ ումումուն
ասայիշինի իւլալ իթտիմէմէք
մագսէտի իլէ՝ ատլիյէ նազըրը
պիր գանուն լախիհէսի գալէմէ
ալմագտա տըր: Իշպու գանուն
մուճէպինճէ ասայիշին իսլալընա
սէպէպ օլան միթինկլէր թէշ-
քիլ իտէնլէրէ 2 սէնէտէն 10 սէ-
նէ մահպուսիյէթ վէ օ՝ Եօլտա
միթինկլէրտէ իսթիլալ վէ
թէճալիւզաթէ թահրիք իտիճի
նութգլար սէօյլէյէնլէրէ 6 ալ-
տան 3 սէնէ մահպուսիյէթ հիւքմ
օլընաճագ տըր:

— Պուրկալտա եազընտա թէ-
լէֆօն մէրքէզի թէսիս օլընա-
ճագ, վէ սօնրա Սօֆիա, Բլէվնա,
Սթ. Ջալօրա վէ եամպօլ իլէ
մուխապէրաթա գօնուլաճագ
տըր:

— Սօֆիատաքի Եունան գօնսօ-
լտը Մ. Ջալօզսթաս պուկար
հիւքիւմէթինէ պիր նօթա թագ-
տիմի իլէ, սէնէի հալիյէտէքի
գարըշքըզլարտան միւթէզա-
րուր օլան Եունան թապալարը
իշիւն 3.000.000 ֆր. թաղմինաթ
թալէպ իթմիշ Պուկար հիւքիւ-
մէթի պու թալէպի րէտտ իշլէ-
միշ Միւճրիմլէրի ճէզալամագ ի-
շիւն թէտպիրլէր էլէ ալընմըշ
վէ մէքըիւր նօթատա տալիլ օ-
լանլարըն պիր չօլը Պուկարիա-
տա տօղմուշ ասըլ պուկար թա-
պաստըրը, վէ պազը գա-
րարտիտէ օլանլարտէ մահքէմէ-
լէրէ միւրաճաթ իթսինլէր տէ-
յիւ ճէվապ վէրիլիյօր:

— Ահօուլ ֆաճէասընըն թահ-
գիգաթը րէսմիյէսի իքմալ օլ
մուշ. պու թահգիգաթտա րում
տէսրթը Մ. Վասիլօսըն միւճրիւ-
միյէթի թէպէյիւն իթմիշ:

ԲՈՒՍԻԱ

Սօնիսլիստէրէ վէ իսթիլալըն
գօմթէլէրինէ գարըշքը օլմագ
իւզրէ՝ էսկի իտարէի գալիմէ
թարաֆտարլարը «Բուս ատա-
լար» նամը իլէ ասըլ րում քիս-
վէսի ալթընտա պիր հայտուտ
գոմթէսի թէշքիլ իթտիլէր,
գաթիլլէր, իւրըրըլար, միւրթէ-
քիպ մէճմուրլար վէ իրտէն գա

զըգտան գօրանլար պու գօմթէ-
յէ տալիլ օլուպ, հիւքիւմէթտէն
տալիլ եիւզ պուլտըզլարը սէ-
պէպլէ հէր պիր ուլիւնսուլըզա,
ճէսարէթ իտէյօրլար, Կէշէն հաֆ-
թա Լօցտա 16 իշճի պունլարտան
գաթլ օլունտու: Պու «Բուս ա-
տալար» սօն վազըթլարտա հիւ-
քիւմէթին իշլէրինէ տալիլ պիր
ամիր կիպի գարըշքուպ, մինիս-
թըրլէրի վէ մէմուրլարը գօր-
գուլմագ տէրէճէլէրինէ իշի ի-
լէրլէթտիլէր:

Հիւքիւմէթէ մուպէնէթ իթ-
մէք իշիւն եիւզ պուլան «Բուս
ատալար»ըն գայրը թէհէմմիւլ
օլընմագ հարէքէթլէրի վիւքէ-
լատան մատա սէրայըն տալիլ
տըգաթընը ճէլպ իթտի, վէ հիւ-
քիւմէթ անլէրէ եիւզ չէվիւրմէ-
կէ պաշլատը: Շու սըրա մէքըիւր
գօմթէնին րէյիսլէրի վէ հիւ-
քիւմէթ պէյնիտէ սօվուզլըզ
հասըլ օլմուշ տըր:

— Պօրսալարտա Եահուտիլէրին
աղա գապուլ օլընմամալարընա
տալիլ ճարի օլան նիզամը թի-
ճարէթ նազըրը լազլ իթտի:

Պագուտա Էհալի հիւքիւմէթ
վէրկիլէրինի վէրմէյօրլար:

— Բէթրապուրկտան պիրտիրի-
լիյօրքի՝ մահպուսանէտէ քօլիւ
թիգա միւթէհիմլէրի պէյնիտէ
պէօյիւկ պիր իսթիլալ զուհուր
իթմիշ օլուպ, տշարտան կէթի-
րիլէն ասքէրլէր միւտալէլէսի
իլէ սիւքիւնէթ հասըլ օլմուշ,
միւսատէմէտէ 300 քիշի վուրուլ՝
մուշ, 17 քիշի գաշմըշ վէ 30 քի-
շի թէքրար մուհաքէմէ իտիլմիշ:

ՄԱՐՈՔ

Մուրաքտան ալընան հալաուի-
սաթ՝ օրատա էվրոբալըրըն
հալինի թէհիլքէտէ կեօսթէրիյօր,
պու սէպէպլէ տէվլէթլէր թան-
ճէրէ հարպսէֆինէլէրի կէօնտէր-
մէքտէ տիրլէր: Ֆրանսանըն Կա-
լիլ վաբօրըն եէրլիլէր թաշլա-
մըշլար:

Մէմալիքին իշլէրլէրինտէ գա-
պիլէլէրտէն պազըլարը ըսեանտա
օլտըզ կիպի, Մօրլար վէ ֆրան-
սըզ ասքէրլէրի պէյնիտէ միւ-
սատէմէլէր վուգու պուլմագտա
տըր: Գըրալլըզ թախթընա օ-
թուրմագ տալաքընտա պուլընան
ըսեան րէյիսի իսթիլալը թէշ-
վիգէ գայրէթ իտէյօր: Ուլզան
գապիլէլէրինտէ տալիլ սըեան
պաշլամըշ տըր:

ԱՃԷՄԻՍՏԱՆ

Թէհրանտան պիրտիրիլտիկի
իւզրէ, էհալի իւլէմատան թէշ-
վիգ օլընարագ՝ մէպուսլարա ի-
թիմաթ իթմէտիկի կիպի, վիլա-
յէթլէրտէ ինթիլապլար կէճ
գալտըզ իշիւն հիւքիւմէթէ
գարը թաճիլիք կէօսթէրմէյէ
պաշլամըշ տըր:

Ա. Ռ. Ի. Թ. Է. Ն. Օ. Գ. Տ. Ո. Ի. Ե. Ց. Է. Բ.

Ռուսանիյ Եաշ քաղաքը ունեցած
սրճալաճառութեան խանութս՝ կամ-
քէս անկախ պատճառներէ ստիպեալ
կը ծախեմ: Ելեկտրաշարժ մեքէնայով
եւ գեղեցիկ գործիքներով կահաւո-
րած եմ: Կոկիկ, հանգիստ եւ շահաւոր
գուժ մը: Մասնաւորապէս հայրենա-
կիցներուս կառաջարկեմ որպէսզի ա-
ռիթէն օգտուին: Ժանօթ եւ վստահելի
անձնաւորութեանց եւ օրինաւոր երաշ-
խաւորութիւն ցօյց տուողներուն զը-
րամին կէս մասը ապառիկ կը թողուի:
Մանրամասնութիւնք թղթակցու-
թեամբ:

Հասցէ.
Օ. Կիւլէճեմսն
Փողոց Կօլիա Թիւ 71
(Ռուսանիյ) ԵԱՇ

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 9 Սեպտեմբեր	
ՋԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն	100 քիւլ. 10-50/13-40
Արապա	52-58 լիպ. 7-10/40
ԱՐԱՅ	
Վալօն	100 քիւլ. 10, 20/10. 40
Արապա	42-47 լիպ. 5-80/6
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ. 4. 20/5.
»	100 քիւլ. 11. 11. 25
ՋԱՎՏԱՐ արապա	52/57 լիպ. 7/7. 20
ՅԱՍՈՒԼԵՍ արապա	100 քիւլ. 16/23
ՌԱՐԻՑԱ	100 քիւլ. — Եօգ
Արապա	100 քիւլ. Եօգ
ՏԱՐԸ արապա	6. 6/40
ԲՕԼՕՁ արապա	55-60 լիպ. 11. 12.
ՄԻՍԻՐ 57-58 լիպ. արապա	6. 40/7. 00
»	100 քիւլ. 9. 20/9. 50
Կիւնտէ վալօն	40/50 վէ 500—600
արապա կէլմէքտէ . վալօն մուսմէ-	
լէսի նարօլէօն 20 ֆր. արապա մու-	
ամէլէսի նարօլէօն 20. 20	

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա քաղաքընտա պազալիյէ	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն	
ֆրանք իլէ :	
ԳԱՎԼԷ	2.10/ 2.25
ՇԷՔԷՐ Նէմցէ	87
ՇԷՔԷՐ քէսմէլ սանտըզ	48
ԲԻՐԻՆՃ ճէնօլա չուվալը	42.
» Ֆիլիպէ »	35/38
» Ինկիլիզ »	32
Բիգօն »	49.
ԿԱՁ Սանտըզ	10 60
ՋԷՑԻՆ Եազը քիւլ	85—1. 5
ԳՈՒՐՈՒ Իւզլիւմ	48
Եունուրթա	100 ատէթի 7. 40

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական, գրական
Բաժնեգիրնը՝ Եւրոպայի համար 30 ֆր.
Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 րուպ-
լի տարեկան :
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ»ի
Կոլկասս) Թիֆլիս

Одговор редакторъ А. Курбетянъ

печатница Д. Тодоровъ и С-не —Варна